ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան 21 հոկտեմբերի 2019թ. Ժամը 12:15

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Շ. Հարությունյան, Հ. Մելիքյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Ա. Մխիթարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ.Բաղդասարյան

1. Գնման ընթացակարգի հրավերի տեքստը փոփոխելու վերաբերյալ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ Պետական վերահսկողության ծառայության Գնումների գործընթացների վերահսկողության վարչության կողմից հոկտեմբերի 21-ին ստացված թիվ Ե/1504-19 գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստում կատարել համապատասխան փոփոխությունները, այն համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

1.2 Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն հրավերի տեքստում փոփոխություն կատարելու վերջնաժամկետը լրացել է, գնահատող հանձնաժողովը որոշեց լուծարել ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Շ. Հարությունյան
	_____	Հ. Մելիքյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Ա. Մխիթարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Լ.Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«16» հոկտեմբեր 2019թ.
6/1509-19

««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

«ՀՀ պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների ոլորտում մրցակցության ապահովման և խտրականության բացառման նպատակով, ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն իրականացնում է մշտադիտարկում, որի ընթացքում քննարկվել է նաև 2019 թվականի հոկտեմբերի 16-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար հայտարարված ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր): Հրավերի վերլուծությամբ արձանագրվել է հետևյալը.

Հրավերում ներառված պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 12-րդ չափաբաժնով ձեռքբերվող «Թուղթ օֆսեթ» գնման առարկայի վերաբերյալ սահմանված է պահանջ այն մասին, որ գնման ընթացակարգին 12-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցը առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական

նկարագիրը ներկայացնելու ժամանակ պատվիրատուին պետք է տրամադրի նաև առաջարկվող ապրանքի (Թուղթ օֆսեթ) նմուշը կտրատված տարբերակով: Նշված պայմանը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթին, այն է՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Վերոնշյալ պայմանը դիտարկվում է որպես տարակերպ մեկնաբանությամբ ավելորդ դրույթ, քանի որ մասնակցի կողմից մատակարարվող ապրանքի համապատասխանությունը պայմանագրում ներառված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին իրականացվում է հանձնման-ընդունման փուլի ժամանակ:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ նմուշի տրամադրումը կամ չտրամադրումը գնորդի կողմից կարող է դիտվել որպես տարակերպ մեկնաբանություն, ինչը կհանգեցնի գնման գործընթացի արհեստական երկարացման, և առաջարկում ենք հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ այն համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Կատարող՝ Մ.Սահակյան
Գնումների գործընթացների
վերահսկողության վարչություն
Հեռ. 010313158